— Կապրի, եթէ ուտելու մի բան ունենայ, — պատասխանեց Ասլանը վրդովուած ձայնով:

— Այդ մասին ես հոգացել եմ... — ասաց վարպետը հազիւ լսելի ձայնով:

Նրա խօսքը ընդհատեց մի կարճահասակ մարդ, համարեա ցնցոտիներով հագնուած, ողորմելի եւ երկչոտ կերպարանքով, որ այդ միջոցին անցաւ մեր մօտով: Վարպետը յարգանքով ողջունեց նրան եւ, երբ բաւական հեռացաւ նա, ասաց մեզ.

— Դա մեր թաղի ամենահարուստ մարդն է:

— Դա՞, այդ մուրացկանը՞, — հարցրեց Ասլանը զարմանալով:

— Այո՛, այդ մուրացկանի նման մարդը:

— Ապա ինչո՞ւ է այնպէս հագնուած, կարծես բոլորովին աղքատ լինի:

Վարպետը մի առանձին տխրութեամբ պատասխանեց.

— Այստեղ աղքատը խօ աղքատ է, իսկ հարուստն էլ ստիպուած է աղքատ ձեւանալ, որովհետեւ նրա հարստութեանը միշտ սպասում է մի վտանգ: Տեսար մի օր թուրքերը մի «շառ ու շուռ» հնարեցին եւ ինչ որ ունի, ձեռքիցը խլեցին:

— Ինչպէ՞ս կարելի է այդ, — հարցրի ես ոչ սակաւ զարմանալով:

— Ինչո՞ւ չէ կարելի, երբ իրաւունքն էլ թշնամու ձեռքումն է, դատաստանն էլ: Հէնց այդ ընտանիքը, որի թշուառութիւնը մի քանի րոպէ առաջ տեսաք, թող ձեզ օրինակ լինի: Դա մեր քաղաքի ամենահարուստ եւ ամենապատուական ընտանիքներից մէկն էր: Մի առաւօտ տանեցիք վեր են կենում եւ սարսափելով տեսնում են իրանց բակումը ընկած մի թուրքի դիակ: Խեղճերին զրպարտեցին սպանութեան մէջ եւ այնքան ժամանակ բանտերում մաշեցին, մինչեւ ամէն հիւթ ծծեցին նրանցից, եւ այն ժամանակ միայն բաց թողին, երբ տեսան, որ Ադամից աւելի մերկ են եւ Եւայից աւելի բոբիկ:

— Բայց միշտ այդպիսի զրպարտութիւններ չէ կարելի հնարել, — պատասխանեցի ես:

— Եթէ այդպիսին չէ կարելի, դրա նմանները միշտ կարելի է: Մէկին կը զրպարտեն, ասելով, թէ մահմեդականի հաւատն է հայհոյել, միւսին թէ՝ մահմեդականի կնոջը ծուռն աչքով է նայել, երրորդին՝ թէ իր տնում զէնք եւ վառօդ է պահել, չորրորդին՝ թէ քաղաքադռնից ձիով է ներս մտել եւ այլն:

Վարպետի վերջին խօսքը դարձրեց իմ ուշադրութիւնը այն երեւոյթի վրայ, որ նկատեցի առաւօտեան. բոլոր հայերը էշով էին գնում բազար, ձի հեծնելը նրանց արգելուած էր: Այս սովորութիւնը կար եւ Պարսկաստանում.